Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻՄ Նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«31» 12 20/6թ.

ԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը սահմանում է Ավանդական բժշկության համալսարանի /այսուհետ՝ ԱԲՀ/ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով օտարերկրյա դիմորդների գիտելիքների ստուգումը:

1.2. Կարգը ընդունվում և փոփոխվում է ԱԲՀ-ի գիտական խորհրդի կողմից:

1.3. Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի օտարերկրյա դիմորդների ընդունելության կազմակերպման հիմքում ընկած է ՀՀ օրենսդրությունը, ԱԲՀ-ի «Օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը», սույն կարգը և կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր:

II. Դիմորդների գիտելիքների ստուգումը

2.1. Դիմորդների գիտելիքների ստուգումը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով կազմակերպվում է ընդունող հանձնաժողով՝ համալսարանի համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների մասնակցությամբ:

2.2. Դիմորդների գիտելիքների ստուգումը և ընդունելությունը ԱԲՀ-ում իրականացվում է ՀՀ ԿԳ նախարարության կողմից փաստաթղթերի փորձաքննությունից՝ փաստաթղթերում առկա տեղեկատվության իսկության ստուգումից և հյուպատոսական վավերացման առկայությունը ճշտելուց հետո՝ ՀՀ ԿԳ նախարարի ուղեգիր-նամակների հիման վրա:

2.3. Դիմորդների գիտելիքների ստուգումն անցկացվում է ՀՀ միջնակարգ կրթական ծրագրի սահմաններում՝ հարցազրույց՝ թեստերի, ինչպես նաև բանավոր քննությունների հիման վրա: Քննական առարկաներն են՝ «Անգլերեն»,«Կենսաբանություն», «Քիմիա»:

2.4. Դիմորդների գիտելիքների ստուգումների արդյունքների հիման վրա դիմորդները կարող են ընդունվել ԱԲՀ-ի առաջին կուրս:

2.5. ԱԲՀ ընդունելության համար նախատեսված քննական առարկաներին չտիրապետող օտարերկրացիները կարող են ուսուցումն անցնել ԱԲՀ նախապատրաստական դասընթացներում: